

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ. ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Միխայիլ Աղաջանյան

Հայրենադարձության ծրագրերի իրավական ապահովման և արդյունավետ իրականացման հարցերը ազգային պետությունների կայունության և հետագա զարգացման կարևոր բաղադրատարրերն են: Հայրենադարձության՝ որպես ազգային պետության պետաիրավական, սոցիալ-տնտեսական և մշակութային դաշտին արտասահմանում գտնվող հայրենակիցների ինտեգրման ամբողջական ու հետևողական գործընթացի, հիմնական բաղադրատարրերի վերլուծությունն ի հայտ է բերում միջազգային փորձի՝ տվյալ հարցի շուրջ եղած սուր անկյուններն ու դրանց հարթման հնարավոր ուղիները: Այն երկրները, որոնք դեռևս գտնվում են իրենց հայրենակիցների հայրենադարձության իրականացման սեփական հայեցակարգերի և կիրառական մեթոդների ձևակերպման իրավաքաղաքական ճանապարհի սկզբին, չեն կարող հաշվի չառնել միջազգային փորձը՝ որպես սեփական առանձնահատկություններին արդեն հայտնի իրավաքաղաքական հայեցակարգերի և մեթոդիկաների հարմարեցման գրավական և վառ օրինակ:

Ներածություն

Ժամանակակից շատ պետություններ, պատմական այս կամ այն հանգամանքների բերումով բախվելով այն փաստին, որ իրենց հայրենակիցների (նույն ազգային ծագումն ունեցող և ինչ-որ ժամանակ տվյալ պետության տարածքում ապրող մարդիկ) մի մեծ քանակություն գտնվում է պատմական հայրենիքի սահմաններից դուրս, ընդունել են հայրենադարձության մասին օրենքներ: Հայրենադարձության էությունն ընկալվում է որպես տվյալ պետության տարածքը կամ ինչ-որ ժամանակ այդ պետության մեջ գտնվող տարածքներն ավելի վաղ լքած հայրենակիցների քաղաքացիության ձեռքբերման պարզեցված միջոց: Համաշխարհային պատմությանը հայտնի է այնպիսի գործելակերպ, երբ երկիրն իր քաղաքացի է հայտարարում իր սահմաններից դուրս ապրող բոլոր հայրենակիցներին: Դա արվում է, այսպես կոչված, արյան իրավունքով: Այդպես են վարվել Իսրայելը, Հունգարիան, մի շարք եվրոպական պետություններ: Նրանք իրենց քաղաքացիներ հայտարարեցին երկրի սահմաններից դուրս ապրող բոլոր հայրենակիցներին և ամրագրված ժամկետում նրանց ապահովեցին քաղաքացիությունը նշող փաստաթղթերով՝ հիմնված հայտարարության և ծննդյան

վկայականի վրա:

Ամենայն հավանականությամբ, հայրենադարձության ոլորտում ամենահարուստ փորձն ու ձևավորված ընթացակարգն ունեցող երկիրն Իսրայելն է: Ավելին, Իսրայելի փորձը Հայաստանի համար կարևոր է նաև պատմական (ցեղասպանություն), ժողովրդագրական (ազգի մեծ մասն ապրում է ազգային պետության սահմաններից դուրս), քաղաքական-տնտեսական («թշնամական շրջակայք», աղքատ բնական պաշարներ, մեծածավալ օգնություն դրսից՝ ազգային սփյուռքի կողմից) բնույթի պատճառներով:

Իսրայելի քաղաքացի կարելի է դառնալ՝ հայրենադարձվելով Վերադարձի մասին օրենքով (1950թ.): Ըստ այդ օրենքի՝

1. յուրաքանչյուր հրեա իրավունք ունի հայրենադարձվել Իսրայել,
2. հայրենադարձությունը կատարվում է հայրենադարձի մուտքի հրավերին (վիզային) համապատասխան: Հայրենադարձի հրավեր տրվում է Իսրայելում բնակվելու ցանկություն ունեցող յուրաքանչյուր հրեայի, բացառությամբ այն դեպքերի, երբ Իսրայելի ներքին գործերի նախարարը համոզված է, որ հրավեր ստանալու համար դիմողը կատարել է հրեա ժողովրդի դեմ ուղղված գործողություններ, կարող է վտանգ ներկայացնել երկրի քաղաքացիների առողջության կամ Իսրայելի անվտանգության համար,
3. հրեայի՝ Վերադարձի մասին օրենքով նախատեսված իրավունքները, ինչպես նաև հայրենադարձի՝ Քաղաքացիության մասին օրենքով (1952թ.) նախատեսված իրավունքները և հայրենադարձի՝ օրենսդրական այլ ակտերով նախատեսված բոլոր իրավունքները տրամադրվում են նաև հրեայի երեխաներին ու թոռներին, կնոջը (ամուսնուն), նրա երեխաների ու թոռների ամուսիններին:

Վերադարձի մասին օրենքը յուրաքանչյուր հրեայի մեխանիկորեն երաշխավորում է Իսրայել հայրենադարձվելու իրավունք: Քաղաքացիության մասին օրենքը նույնպես մեխանիկորեն քաղաքացիություն է տրամադրում բոլոր նրանց, ովքեր երկիր են գալիս Վերադարձի մասին օրենքով:

Իսրայելի փորձը ցույց է տալիս, որ հայրենադարձներին քաղաքացիության շնորհումը վերաբնակների՝ իսրայելական հասարակությանն ինտեգրվելու գործընթացի սկիզբն է միայն, և, համապատասխանաբար, անհրաժեշտ է, որպեսզի հետագայում ընդունող երկիրն աշխատի հայրենադարձության գործընթացի արդյունավետությունն ապահովելու և ավարտին հասցնելու ուղղությամբ և կշռադատված ծրագրեր մշակի: Այսպիսով, կարելի է ասել, որ Իսրայելում հայրենադարձությունն ավելի լայն ընկալվում ունի՝ ներառելով ոչ միայն անմիջական տեղափոխման գործընթացն ու դրա

հետ կապված հարցերը, այլև նորեկների հետագա ինտեգրումը իսրայելական հասարակությանը: Սրանով Իսրայելը տարբերվում է մասնավորապես, այն պետություններից, որոնցում հայրենադարձության մասին արդեն գոյություն ունեցող կամ ծրագրվող օրենքները նախատեսում են «պարզեցված քաղաքացիության ստացում, որ ենթադրում է պետության նվազագույն աջակցություն հայրենադարձների տեղավորման գործում» (օրինակ՝ Ռուսաստանը): Իսրայելում ստեղծված է հստակ փուլեր ունեցող և նորեկներին կարգերի բաժանող (հիմնականում ըստ մասնագիտության՝ գիտնականներ, բժիշկներ, ինժեներներ, մշակույթի աշխատողներ և այլն) ծրագիր, որը լուծում է նորեկների անմիջական և հետագա տեղավորման հարցերը. լեզվի ուսուցում, աշխատանքի տեղավորում, բնակարան և այլն: Այս ասպարեզներում հայրենադարձների օգնության պատասխանատվությունը դրված է համապատասխան կառավարական մարմինների՝ Աբսորբցիայի նախարարության և Հրեական գործակալության հայրենադարձության հատուկ բաժնի վրա: Աբսորբցիայի նախարարության պարտականությունների մեջ են մտնում. հայրենադարձներին բնակարանով ապահովելը, նախնական դրամական օգնությունը, այլ հաստատությունների հետ հարաբերությունների հաստատումը և հայրենադարձների աբսորբցիայի ուղղությամբ նրանց գործունեության համախմբումը և այլն: Նախարարության ղեկավարությունը՝ նախարարի գլխավորությամբ, ձևակերպում է աբսորբցիայի գլխավոր քաղաքականությունը, որի հանգամանալի մշակմամբ զբաղվում է ծրագրման և հետազոտման բաժինը: Այդ քաղաքականության իրականացմամբ զբաղվում են նախարարության շրջանային և տեղական բաժանմունքները, ինչպես նաև հատուկ բաժինները՝ բնակարանի և աշխատանքի տեղավորման, սոցիալական աբսորբցիայի, ուսանողների գործերով վարչությունը, գիտնականների աբսորբցիայի կենտրոնը: Տեղեկատվության բաժինը պատասխանատու է իսրայելական հասարակությանը հայրենադարձների կենցաղային, աշխատանքային և սոցիալ-մշակութային սերտաճմանն անհրաժեշտ տեղեկատվությունը նրանց հասցնելու համար: Հրեական գործակալության հայրենադարձության բաժնի տնօրինության տակ են կենտրոնացված հայրենադարձության նախապատրաստման բոլոր ծառայությունները, ինչպես նաև, այսպես կոչված, աբսորբցիայի կենտրոնները, որոնցով անցել են տասնյակ հազարավոր հայրենադարձներ: Հրեական գործակալության պարտականությունների մեջ են մտնում հայրենադարձներին և նրանց ունեցվածքը երկիր հասցնելը, իրավաբանական խորհրդատվությունը, ժամանակավոր կացարանի հատկացումը: Գործակալությունն աջակցում է նորեկներին երբայերեն սովորելու հարցում և նրանց տրամադրում դրամական օգնություն: Երիտասարդական

ալիայի¹ բաժինն արդեն երկար տարիներ զբաղված է երեխաների և երիտասարդության տեղավորման հարցերով: Հրեական գործակալության ներկայացուցիչները գտնվում են աշխարհի բոլոր խոշոր հրեական կենտրոններում, նրանք կազմակերպում են եբրայերենի ուսուցման խմբեր, համապատասխան տեղեկատվություն են տալիս պոտենցիալ հայրենադարձներին և անհրաժեշտ օգնություն (այդ թվում և դրամական) են տրամադրում Իսրայել հայրենադարձվելու համար: Ալիային քաջալերելու գործունեությունը Հրեական գործակալության աշխատանքի գերակա ուղղություններից մեկն է: Իսրայելում, իբրև աբսորբցիայի առաջին քայլ, հայրենադարձները, հատկապես բարձրագույն կրթություն ունեցողները, ուղարկվում են, այսպես կոչված, «ուլպան» եբրայերեն սովորելու: 1990թ. մտցված «ուղղակի աբսորբցիայի» քաղաքականությամբ նախատեսվում է հայրենադարձներին՝ երկիր գալուց հետո առաջին վեց ամսվա ընթացքում, «աբսորբցիայի գամբյուռի» տրամադրում: Այս նպաստի նպատակը նոր հայրենադարձների ապրուստի նվազագույնի ապահովումն է՝ լեզուն սովորելու ընթացքում [1]:

Ակնհայտ է, որ շատ ավելի նվազ ֆինանսական պոտենցիալ ունեցող Հայաստանի համար հայրենադարձների ինտեգրման իսրայելյան ծրագրերը պարզապես նրա ուժից վեր են: Ուստի կարելի է ենթադրել, որ Հայաստանի համար արդյունավետ կլինի միջանկյալ բնույթի՝ «պետության կողմից նվազագույն աջակցության» և իսրայելյան ծրագրերի միջև գտնվող տարբերակը:

Միջազգային իրավունքով «հայրենադարձություն» տերմինին տրվում է զինված հակամարտությունների իրավունքի նորմերի (օրինակ, հայրենադարձություն, այսինքն՝ ռազմագերիների կամ ներկալվածների (*интернированные*) վերադարձ ռազմական գործողությունների ավարտից հետո) և փախստականների իրավունքի (փախստականների վերադարձ իրենց մշտական բնակության վայրեր) կիրառման համատեքստում գտնվող նշանակություն: Մեր կողմից դիտարկվող կտրվածքով՝ հայրենադարձության ունիվերսալ կամ տարածաշրջանային-բազմակողմանի միջազգային իրավական նորմեր գոյություն չունեն, ինչը կապված է հայրենակիցների հայրենադարձության գործընթացի առանձնահատկության և տվյալ գործընթացի ճանաչման ու ապահովման հարցերում յուրաքանչյուր պետության սուվերեն կամքի բացարձակ ընդունելիության հետ: Այնուամենայնիվ, կարելի է նշել միջազգային իրավունքի որոշ ճանաչված սկզբունքներ և նորմեր, որոնք առնչվում են հայրենակիցների հայրենադարձության հետ կապված հարցերին և ունեն սկզբունքային բնույթ:

¹ Ալիյա՝ հրեաների Իսրայելում վերաբնակեցումը (հայրենադարձությունը) մշտական բնակության նպատակով:

1. **Մարդու իրավունքների 1948թ. համընդհանուր հռչակագիրը.**– «Յուրաքանչյուր ոք, որտեղ էլ որ նա գտնվի, իրավունք ունի իրավասուրյեկտ ճանաչվելու» (հոդված 6)¹: «1. Ամեն մարդ քաղաքացիության իրավունք ունի: 2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր քաղաքացիությունից կամ իր քաղաքացիությունը փոխելու իրավունքից» (հոդված 15):
2. **Քաղաքացիություն չունեցողների կրճատման մասին 1954թ. կոնվենցիան.**– «Պայմանավորվող պետությունը քաղաքացիություն է տալիս այն անձին, որն այլապես քաղաքացիություն չէր ունենա և որն ի վիճակի չէ ձեռք բերել պայմանավորվող պետության, որի տարածքում նա ծնվել է, քաղաքացիությունը, քանի որ միջնորդություն տալու համար անհրաժեշտ տարիքն անցել է...» (հոդված 1, կետ 4): «Պայմանավորվող պետությունը քաղաքացիություն է տալիս իր տարածքում չծնված անձին, որը քաղաքացիություն չէր ունենա, եթե նրա ծնողներից մեկի քաղաքացիությունը, այդ անձի ծնվելու ժամանակ, այդ պետության քաղաքացիությունը չլիներ» (հոդված 4):
3. **Հայրենագուրկների կարգավիճակի մասին 1954թ. կոնվենցիան.**– «Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինականորեն ապրող հայրենագուրկներին կառավարական օգնության և աջակցության հարցում կտրամադրեն նույն կարգավիճակը, ինչից օգտվում են իրենց քաղաքացիները» (հոդված 23): «Պայմանավորվող պետությունները հնարավորինս կթեթևացնեն հայրենագուրկների ուժացումն ու հպատակագրումը: Մասնավորապես, նրանք կանեն իրենցից կախված ամեն ինչ հպատակագրման և դրա հետ կապված հանգանակությունների ու ծախսերի հնարավոր նվազեցման գործավարության արագացման համար» (հոդված 32)²:
4. **Փախստականների կարգավիճակի մասին 1950թ. կոնվենցիան.**– 23 և 32 հոդվածները (համանման հայրենագուրկների կարգավիճակի մասին կոնվենցիայի բերված հոդվածների բովանդակությանը)³ [2]:
5. **ՄԱԿ Գերագույն հանձնակատարի՝ փախստականների գործերով վարչության գործադիր կոմիտեի 1985թ. N40 (XXXVI) բանաձևը.** «Կամավոր հայրենադարձություն». «a) կրկին հաստատվում է անձանց՝ իրենց ծագման երկիր կամավոր վերադարձի հիմնական իրավունքը... d) իր քաղաքացիների հանդեպ պետության պարտականությունների և

¹Նմանաբնույթ նորմ է 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային պակտի 16-րդ հոդվածը:

²«Այս կոնվենցիայում «հայրենագուրկ» տերմինով նշվում է այն անձը, որը չի դիտարկվում որպես որևէ երկրի քաղաքացի՝ ելնելով նրա օրենքից» (Հայրենագուրկների կարգավիճակի մասին կոնվենցիայի հոդված 1-ի կետ 1):

³Հայաստանը նշված բոլոր երեք կոնվենցիաների մասնակից է:

այլ պետությունների պարտականությունները կամավոր հայրենադարձությանն օժանդակելու գործում պետք է խրախուսվեն միջազգային հանրության կողմից: Միջազգային կամ տարածաշրջանային մակարդակներում կամավոր հայրենադարձությանն աջակցելու միջազգային գործողությունները պետք է ստանան անմիջականորեն շահագրգռված պետությունների լիարժեք աջակցությունն ու օժանդակությունը»¹: Ինչպես վերը նշվեց, ժամանակակից միջազգային իրավունքը չունի բազմակողմանի միջպետական համաձայնագրեր (կոնվենցիաներ) հայրենադարձության հետ կապված հարցերի կարգավորման ոլորտում: Որոշ միջազգային կոնվենցիաներում հանդիպող նման տերմինաբանությունը չպետք է շփոթության տեղիք տա: Այսպես, օրինակ, Անչափահասների հայրենադարձության մասին 1970թ. Եվրոպական կոնվենցիան (ընդունված Եվրոպայի խորհրդի շրջանակներում), չնայած իր անվանմանը, շոշափում է նեղ բնույթի հարցեր² և «հայրենադարձություն» տերմինին տալիս է ուրույն նշանակություն:

1. Հայրենակիցների հայրենադարձության գործընթացի իրավական կարգավորման փորձը

Ստորև ներկայացնում ենք հայրենադարձության իրավական կարգավորման հիմնական դրույթների վերլուծությունը Լեհաստանի Հանրապետության (ԼՀ) «Հայրենադարձության մասին» (2000թ. նոյեմբերի 9) օրենքի և Հունգարիայի Հանրապետության «Սահմանակից երկրներում ապրող հունգարների մասին» (2001թ.) օրենքի օրինակներով:

Ազգությամբ լեհ կամ լեհական ծագմամբ անձանց հայրենադարձությունը, այսինքն՝ վերադարձը հայրենիք, օրենքի նորմերով ամրագրված լեհական քաղաքացիության ձեռքբերման արտոնյալ իրավունք է («Օրենքը սահմանում է հայրենադարձությունից հետո լեհական քաղաքացիություն ստանալու կարգը, հայրենադարձների իրավունքները, ինչպես նաև հայրենադարձներին ու նրանց ընտանիքների անդամներին օգնություն

¹ Ակնհայտ է, որ Գործադիր կոմիտեի բանաձևի նշված դրույթը վերաբերում է փախստականների հայրենադարձության հետ կապված հարաբերություններին, նշանակում է շոշափում է քննարկվող թեմայից տարբեր հարցեր: Մակայն այս բանաձևում կարևոր է «կամավոր հայրենադարձություն» տերմինի ընկալման սկզբունքային հիմքը, որ նշում է կոնկրետ հայրենադարձների կամքը և շահերը հաշվի առնելու առաջնահերթության մասին:

² «1. Այս կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետության տարածքում անչափահասների նկատմամբ, ում հայրենադարձությունը հարցապնդվում է այլ Պայմանավորվող պետության կողմից հետևյալ պատճառներից մեկի հետ կապված... 2. Տվյալ կոնվենցիան կիրառվում է նաև այն անչափահասների հայրենադարձության նկատմամբ, որոնց ներկայությունն իր տարածքում Պայմանավորվող պետությունը համարում է իր շահերի կամ տվյալ անչափահասների շահերի հետ անհամատեղելի, եթե այդ պետության օրենսդրությամբ օրինական է համարվում անչափահասի տեղափոխումն իր տարածքից» (հոդված 2):

ցուցաբերելու ընթացակարգն ու միջոցը», հոդված 1-ի կետ 1): Իրավական իմաստով հայրենադարձ է համարվում այն անձը, ով ԼՀ է եկել հայրենադարձության հրավերի հիման վրա («Հայրենադարձ է համարվում լեհական ծագմամբ անձը, ով Լեհաստան է եկել հայրենադարձության հրավերի հիման վրա, մշտական բնակություն ստանալու մտադրությամբ», հոդված 1-ի կետ 2):

Ազգությամբ լեհ կամ լեհական ծագմամբ օտարերկրացուն, որը մտադիր է մշտական բնակություն հաստատել ԼՀ-ում, նման հրավեր տալիս է օտարերկրացու բնակության վայրի լեհական դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսության ղեկավարը, Լեհաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի և վարչակազմի համաձայնությունն ստանալուց հետո:

Հայրենադարձության հրավերի համար դիմող անձը համապատասխան լեհական դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսության ղեկավարին պետք է ներկայացնի.

1. հայրենադարձության հրավեր տալու մասին լեհերեն գրված անհատական խնդրանքի երկու օրինակ,
2. երկու լուսանկար,
3. լեհական ազգությունը կամ ծագումը հաստատող փաստաթղթեր,
4. դատվածության և նախկին բնակության վայրի քաղաքացիներին ու պետությանը պարտք չունենալու մասին փաստաթուղթ (օրինակ՝ ալիմենտ վճարելու սահմանված պարտականություն),
5. հրավեր ստանալու խնդրագրում բերված փաստերը հաստատող այլ փաստաթղթեր (օրինակ՝ տան կամ այլ բնակտարածության սեփականության վկայականի պատճենը և այլն),
6. անձը հաստատող լեզալ փաստաթուղթ:

Խնդրատուի կամ նրա նախորդների (նախնիների) լեհական ազգությունը կամ ծագումը հաստատող փաստաթղթեր կարող են լինել.

1. անձը հաստատող լեհական փաստաթղթեր,
2. քաղաքացիական կացության ակտերի պատճեններ, ծագման փաստաթղթեր, մկրտության վկայական և այլն, որոնք վկայում են լեհականության հետ կապի մասին,
3. լեհական բանակում ծառայությունը հաստատող փաստաթղթեր,
4. նախկինում լեհական քաղաքացիություն ունենալը հաստատող փաստաթղթեր,
5. նախկին բնակության վայր հանդիսացող պետության՝ անձը հաստատող կամ այլ պաշտոնական փաստաթղթեր, որոնցում կա գրանցում,

- որը տեղեկացնում է լեհական ազգությանը պատկանելու մասին,
 6. ազգությամբ լեհ լինելու մասին գրանցում պարունակող այլ փաստաթղթեր:

ԼՀ հյուպատոսը հայրենադարձության թեկնածուի հետ զրույցի արդյունքում, առկա տեղեկությունների և փաստերի, ինչպես նաև նրան ներկայացված փաստաթղթերի և այլ ապացույցների վերլուծության հիման վրա ուսումնասիրում է, թե համապատասխանում են, արդյոք, լեհական ազգությանը պատկանելու կամ լեհական ծագում ունենալու մասին կազմված վերլուծություններն իրականությանը: Զրույցի ընթացքում պարզվում է նաև խնդրատուի՝ Լեհաստանի հետ ունեցած զգացական, մշակութային և լեզվական կապի աստիճանը («Տվյալ օրենքին համապատասխան՝ լեհական ծագում ունեցող է համարվում այն անձը, որը հայտարարել է իր ազգությամբ լեհ լինելու մասին և համապատասխանում է հետևյալ պայմաններին. 1. ծնողներից գոնե մեկը կամ տատիկը (պապիկը), կամ նախապապը և նախատատը ազգությամբ լեհ են, 2. անձը հաստատում է իր կապը լեհականության հետ, մասնավորապես՝ լեհերենի, լեհական ավանդույթների ու սովորույթների պահպանմամբ» (հոդված 5-ի կետ 1):

Հայրենադարձության հրավեր տալու խնդրագիրը, դրա հիմնավորված լինելու վերաբերյալ դրույթի հետ միասին, լեհական դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսության ղեկավարը փոխանցում է ԼՀ ներքին գործերի նախարարություն և վարչակազմ՝ հայրենադարձության հրավեր տալու համաձայնություն ստանալու նպատակով: ԼՀ ներքին գործերի նախարարությունը և վարչակազմը հայրենադարձության հրավերի ձևակերպման համաձայնությունը տալուց առաջ դիմում են այլ պետական մարմինների՝ ուղարկելով ամբողջական անձնական գործը և կարծիք հայցելով հետևյալ հարցերի շուրջ.

1. պետության և հասարակական կարգի անվտանգությունը,
2. խնդրատուների՝ Լեհաստանում բնակվելու վայրի և այլ տեղեկությունների վերաբերյալ վկայությունների վավերացում (վոյեվոդությունների և գմինաների¹ վարչությունների միջոցով):

Հայրենադարձության հրավերի մերժման հիմք, այլոց թվում, կարող են համարվել պետության անվտանգությունից բխող նկատառումները, ինչպես նաև լեհական ծագումը հաստատող բավարար փաստաթղթերի բացակայությունը:

ԼՀ հայրենադարձության մասին օրենքով՝ հյուպատոսն է որոշում՝

¹ Կառավարման վարչատարածքային մարմիններ Լեհաստանում:

ճանաչել տվյալ մարդուն որպես լեհ, և համապատասխանում է, արդյոք, նա լեհական քաղաքացիություն ստանալուն անհրաժեշտ չափանիշներին: Ծագումը հաստատող ապացույցներ կարող են լինել լեհական իշխանությունների կողմից տրված փաստաթղթերը (քաղաքացիական կացության ակտերի բաժնի գրանցումները կամ մկրտության մասին վկայականները):

Խնդրատուն կարող է բողոքարկել ԼՀ ՆԳՆ որոշումը՝ խնդրելով վերանայել հարցը: ԼՀ ՆԳՆ դրական եզրակացությունը ստանալուց հետո համապատասխան բնակության վայրի լեհական հյուպատոսը տալիս է (ձևակերպում է) հայրենադարձության հրավերը: Այն գրանցում է ստանում շահագրգիռ անձի անձնագրում: Մեկանգամյա գործողության այս հրավերը գործում է հանձնման օրվանից սկսած մեկ տարվա ընթացքում, երբ պետք է իրականացվի պետական սահմանի անցումը: Այն անձինք, ովքեր Լեհաստան են գալիս հայրենադարձության օրինական հրավերներով, լեհական քաղաքացիություն են ստանում ԼՀ սահման մտնելու պահից սկսած, ուստի նրանք պետք է վավերացնեն այդ փաստը սահմանային վերահսկողության կնիքով («Այն անձը, ով Լեհաստան է գալիս հայրենադարձության հրավերով, մեխանիկորեն ստանում է լեհական քաղաքացիություն Լեհաստանի Հանրապետության սահման մտնելու պահից», հոդված 4):

Բնակության վայր հասնելով՝ հայրենադարձները պարտավոր են.

1. տեղի ԶԱԳՍ-ում գրանցել իրենց քաղաքացիական կացության փաստաթղթերը (ծննդական, ամուսնության, ամուսնալուծության վկայականներ), որոնք ներկայացվում են նաև նոտարական թարգմանչի կողմից կատարված լեհերեն թարգմանությամբ,
2. դիմել համապատասխան բնակության վայրի վոյեվոդության քաղաքացիական իրավունքների վարչություն, որը հայրենադարձի ներկայացրած քաղաքացիական կացության քաղվածքի (ԶԱԳՍ-ում արված) հիման վրա տալիս է լեհական քաղաքացիության վկայական,
3. գրանցվել և անձնագիր ստանալ հայրենադարձի համապատասխան գմինայի կամ քաղաքի վարչության բնակչության հաշվառման բաժնում:

ԼՀ հայրենադարձության օրենքի 4-րդ բաժինը կարգավորում է հայրենադարձներին օգնության ցուցաբերման ձևի ու կարգի հետ կապված հարցերը: Օրենքի 18-րդ հոդվածում նշվում է, որ հայրենադարձն ու նրա ընտանիքի անդամները պետք է սովորեն լեհերեն: Հոդվածով նախատեսվում է նաև լեզվի ուսուցման դասընթացների կազմակերպումը դնել գործադիր իշխանությունների համապատասխան մարմինների վրա:

Հունգարիայում սփյուռքի հետ հարաբերությունները պետության արտաքին քաղաքականության գերակայություններից են: Այս մասին է վկա-

յում այն փաստը, որ երկրի Հիմնական օրենքում հռչակվում է արտասահմանում գտնվող հունգարացիների ճակատագրի համար Հունգարիայի Հանրապետության պատասխանատվության սկզբունքը: Հունգարիայի գործող Սահմանադրության 6-րդ պարագրաֆի 3-րդ կետը դրույթն է այն մասին, որ «Հունգարիայի Հանրապետությունը պատասխանատվություն է զգում իր սահմաններից դուրս ապրող հունգարացիների ճակատագրի համար և նպաստում է Հունգարիայի հետ նրանց կապերի սերտաճմանը» [3]:

Սփյուռքի¹ նկատմամբ Հունգարիայի պետական քաղաքականությունն ունի տարբերակված և որոշակի իմաստով պրագմատիկ բնույթ: Ելնելով հարևան պետությունների հետ հատուկ կապերից և ընթացիկ օրենսդրության մակարդակում իրականացնելով Սահմանադրության վերը նշված դրույթը՝ հանրապետության խորհրդարանը 2001թ. ընդունեց «Սահմանակից երկրներում ապրող հունգարացիների մասին» օրենքը (օրենքն ուժի մեջ է մտել 2002թ. հունվարի 1-ին):

Տարբերակվածության և պրագմատիկության վերոնշյալ սկզբունքները տեղ են գտել օրենքի 1-ին հոդվածում, որի համաձայն՝ «Օրենքը կարգավորում է Հունգարիայի քաղաքացի չհանդիսացող քաղաքացիների, ինչպես նաև նրանց ամուսինների ու անչափահաս երեխաների (այդ թվում և այն դեպքերում, եթե նրանք էթնիկ հունգարացիներ չեն) կարգավիճակը, ովքեր հայտարարել են հունգար ազգին պատկանելության մասին և ապրում են Խորվաթիայի Հանրապետությունում, Հարավսլավիայի Միության անկախ Հանրապետությունում, Ռումինիայում, Սլովենիայի Հանրապետությունում, Սլովակիայի Հանրապետությունում, Ուկրաինայում»: Այս դրույթը չի տարածվում նրանց վրա, ովքեր ինքնակամ հրաժարվել են հունգարական քաղաքացիությունից կամ Հունգարիայում մշտապես ապրելու թույլտվություն ունեն:

Աչքի է զարնում օրենքի 1-ին հոդվածում թվարկված երկրների շարքում Ավստրիան չհիշատակելը, ինչը կարելի է բացատրել պատմական բնույթի գործոններով, ինչպես նաև նրանով, որ օրենքի ընդունման պահին թվարկված երկրներից ոչ մեկը և ինքը՝ Հունգարիան էլ դեռևս չէին մտել Եվրամիության կազմ: Օրենքը նպատակ ուներ ապահովել նախկին սոցիալիստական երկրներում ապրող հունգարացիների իրավունքները: Ինչպես

¹ Հունգարական սփյուռքը բավական մեծաթիվ է և երկրի բնակչության համեմատ կազմում է հունգարացիների ընդհանուր թվի մեկ երրորդը: Այն մեծ մասամբ ձևավորվել է XIX-XX դդ. պետության տարածքի փոփոխությունների արդյունքում: Հունգարացիների մի մասը հայտնվել է արտասահմանում քաղաքական իրադարձություններով պայմանավորված արտագաղթի արդյունքում: 1956թ. իրադարձությունների ընթացքում և դրանցից հետո երկիրը լքել են մոտ 200 հազ. փախստականներ, որոնց մեծ մասն ինտեգրվել է արևմտյան հասարակություններում: 1956թ. իրադարձությունների պատճառով հայրենիքից փախած հունգարացիների ճնշող մեծամասնությունը (180 հազ.) հանգրվանեց Ավստրիայում, ինչպես նաև Հարավսլավիայում (20 հազ.): Տասնյակ հազարավոր էթնիկ հունգարացիներ արդեն ապրում էին հարավսլավական Վոյեվոդինայում, ինչը դրական դեր ունեցավ 1956թ. վերջին, 1957թ. սկզբին եկած փախստականների աղապատեցման համար:

նշվում է օրենքի ներածականում, դրա ընդունումը թելադրված էր «սահմանակից երկրներում ապրող հունգարացիների՝ միասնական հունգարական ազգին պատկանելությունը երաշխավորելու և նրանց բարեկեցությունն ու ազգային ինքնությունը նրանց բնակության վայր պետություններում ապահովելու» ձգտմամբ: Հունգարիայի նախագահ Ֆերենց Մադլը նշել է. «Տվյալ փաստաթուղթը պետք է կարգավորի արտասահմանում ապրող մեր հայրենակիցների մշակութային բոլոր խնդիրները, որպեսզի նրանք իրենց հունգարացի զգան» [4]:

Օրենքի կոնկրետ դրույթների ոգուց և բովանդակությունից երևում է, որ այն լրացնում է Հունգարիայի Հանրապետության և էթնիկ հունգարացիներով խիտ բնակեցված երկրների իրավանորմատիվային կարգավորման ընդհանուր դաշտը՝ հունգարացիների իրավունքների ապահովման և պաշտպանության հետ կապված: Այսպես, օրինակ, օրենքի ներածականում նշվում է, որ այն չի շոշափում աշխարհի այլ մասերում ապրող հունգարացիների՝ օրենսդրորեն երաշխավորված արտոնություններն ու օգնությունները: Օրենքով սահմանված արտոնություններն ու օգնությունը կարող են ստանալ որոշակի անձինք՝ սահմանված պայմանների և երկու փաստաթղթերից մեկի՝ արտասահմանցի հունգարացու վկայականի և արտասահմանցի հունգարացու ընտանիքի անդամի վկայականի առկայության դեպքում: Առաջին փաստաթուղթը նախատեսված է հենց արտասահմանցի հունգարացիների, իսկ երկրորդը, ինչպես երևում է անվանումից, նրանց ընտանիքների անդամների համար: Օրենքում հանգամանորեն սահմանված են այս փաստաթղթերի ստացման պայմանները:

Վկայականներ ստանալու հավակնորդները պետք է ոչ միայն համապատասխանեն այս օրենքի պայմաններին, այլև հաստատեն դրանք համապատասխան ձևով: Վկայական ստանալու համար անհրաժեշտ է, մասնավորապես, ունենալ հունգարական ազգին պատկանելությունը, հունգարական ծագումը հաստատող փաստաթղթեր. օրինակ՝ խորհրդային անձնագիր, որում նշված են հունգարական ազգությունը, համապատասխան ծննդյան վկայականը և այլն: Օրենքի առանձնահատկությունը նրանում հիշատակված կազմակերպությունների էական դերի ու գործառույթների առկայությունն է. այդ կազմակերպությունները ներկայացնում են հողված 1-ում նշված՝ էթնիկ հունգարացիներով խիտ բնակեցված երկրների հունգարական ազգային համայնքները: Հայրենադարձի վկայական տրվում է տվյալ սահմանակից երկրի հունգարական ազգային համայնքը ներկայացնող և Հունգարիայի Հանրապետության կառավարության կողմից որպես «երաշխավորող» ճանաչված համապատասխան կազմակերպության երաշխավորությամբ: Որպեսզի համապատասխան երկրի հունգարական հա-

մայնքը ներկայացնող կազմակերպությունը Հունգարիայի կառավարության կողմից ճանաչվի որպես երաշխավորելու իրավունք ունեցող սուբյեկտ, այն պետք է «կարողանա տվյալ երկրի հունգարական համայնքի շահերը ներկայացնել ամբողջությամբ» և ունենա հայտարարություններն ընդունելու և գնահատելու համար անհրաժեշտ կազմակերպական ու կադրային հնարավորություններ:

Երաշխավորությունը պետք է հաստատի հավակնորդի պատկանելությունը հունգարական ազգին նրա անձնական (անչափահասների համար՝ նրանց օրինական ներկայացուցչի) հայտարարության հիման վրա և վավերացնի հավակնորդի ստորագրության իսկությունը: Երաշխավորությունը ներառում է հավակնորդի հայտարարությունը, նրա լուսանկարը, հասցեն, անձնական տվյալները, որոնք կգրանցվեն վկայականում, երաշխավորող կազմակերպության անվանումը, պաշտոնական կնիքի դրոշմվածքը, այդ կազմակերպության անունից գործող անձի անունը և ստորագրությունը, երաշխավորության տրման տեղն ու ամսաթիվը:

Արտասահմանցի հունգարացու ընտանիքի անդամին վկայական տալու համար երաշխավորությունում հավաստվում են հավակնորդի և տվյալ օրենքի սուբյեկտ հանդիսացող հունգարացու միջև ազգակցական հարաբերությունները:

Օրենքով նախատեսվում է համապատասխան վկայականն ստանալու ևս մեկ կարևոր պայման. այդ վկայականներն ստանալու հավակնորդների վերաբերյալ հունգարական իրավասու մարմիններում չպետք է լինի արտաքսման, Հունգարիա մուտքի կամ այնտեղ ապրելու արգելքի, կանխամտածված հանցագործության համար նրանց դեմ հարուցված քրեական գործի մասին գործող որոշում:

Նախատեսված են վկայականների, ինչպես նաև համապատասխան արտոնությունների տրամադրման հանդեպ պետական վերահսկողության զանազան ձևեր: Հունգարիայի Հանրապետության՝ դիմումներով զբաղվող վարչությունը հաշվառում է վկայականներում պարունակվող տեղեկությունները, ինքնության վերաբերյալ տվյալները, վկայականների տերերի հասցեները, համապատասխան փաստաթղթերն ստանալու իրավունք տվող ազգակցական կապերը, մուտքի թույլտվության համարներն ու գործողության ժամկետները և այլն: Համապատասխան տվյալները կարող են ուղարկվել Հունգարիայի Կենտրոնական վիճակագրական վարչություն (վիճակագրության համար), արտոնություններ և օգնություն տրամադրող, դրանց հաշվառումն իրականացնող (իրավունքների ստուգման և չարաշահումների կանխման նպատակով) մարմիններին, ինչպես նաև քրեական դատավարության, իրավապահ մարմիններին, ազգային անվտանգության ծառայությանը և

արտասահմանյան քաղաքացիների գրանցման մարմիններին:

Նախատեսված է վկայականը տալու կամ հետ վերցնելու հարցերով տրվող դիմումները դիտարկող վարչության իրավաբանական ուժ ունեցող վարչական որոշումը բողոքարկելու դատական կարգ: Ընդ որում՝ կարևոր է նշել, որ դատարանն իր վճռով կարող է փոխել վարչական մարմնի որոշումը:

Այն հունգարացիների համար, որոնց նկատմամբ կիրարկվում է այս օրենքը, սահմանված են արտոնություններ և օգնություն ստանալու իրավունք Հունգարիայի Հանրապետության տարածքում, ինչպես նաև նրանց բնակության վայրերում: Ընդհանուր առմամբ, օրենքում նրանց կարգավիճակը բնութագրվում է որպես Հունգարիայի Հանրապետության տարածք «մուտքի և բնակվելու հարցերում հնարավորինս նպաստելու ոեժիմ» (հոդված 3):

Օրենքով սահմանված են տեղափոխման հետ կապված մի շարք արտոնություններ: Սահմանակից երկրների հունգարացիներն իրավունք ունեն Հունգարիայում արտոնյալ պայմաններով երթևեկել տեղական նշանակության հասարակական փոխադրամիջոցներով, ինչպես նաև երկաթուղով՝ 2-րդ դասով ճամփորդելիս: Մինչև 6 տարեկան երեխաներն ու 65-ն անց անձինք անսահմանափակ քանակությամբ անվճար երթևեկելու իրավունք ունեն: Մարդկանց այս նույն խումբը տարեկան 4 անգամ հեռավոր ճամփորդության մեկնելու համար հասարակական փոխադրամիջոցներից օգտվելու փոխադրավճարի 90%-ի փոխհատուցման իրավունք ունի: Նման փոխհատուցում տարեկան մեկ անգամ տրվում է 10 հոգուց բաղկացած խմբին (որի անդամները պետք է լինեն մինչև 18 տարեկան) և նրանց ուղեկցող երկու մեծահասակներին:

Օրենքի սուբյեկտները մշակույթի ասպարեզում հավասարեցված են Հունգարիայի քաղաքացիներին: Այս ընդհանուր սկզբունքը կոնկրետացված է արտասահմանցի հունգարացիների համար հատկապես կարևոր որոշ իրավունքների պարագայում (հանրային մշակութային հաստատություններից և նրանց ծառայություններից օգտվելու իրավունքը, մշակութային արժեքների և գիտական հետազոտությունների մատչելիության ապահովումը հասարակության համար, պատմական հուշարձաններ այցելելու և դրանց վերաբերյալ փաստաթղթերին ծանոթանալու ազատ իրավունքը և այլն): Օրենսդրորեն սահմանված են անվճար տրվող ծառայությունները, մասնավորապես՝ բոլոր պետական հանրային գրադարանների ծառայություններից օգտվելու իրավունքը:

Կրթության ոլորտում օրենքը հղում է կատարում մեկ այլ փաստաթղթի՝ 1993թ. ընդունված «Բարձրագույն կրթության մասին» Հունգարիայի օրենքի դրույթներին: Օտարերկրյա հունգարացիների համար նախատեսված է ինչ-

պես բարձրագույն դպրոցում կամ համալսարանում առաջին կրթություն ստանալու, այնպես էլ ավելի բարձր կրթություն, ներառյալ՝ գիտական աստիճան ստանալու իրավունք: Ընդ որում՝ պետության կողմից ֆինանսավորվող կրթական ծրագրերի ցերեկային ուսուցման ուսանողներն օրենքով սահմանված թոշակի, ուսանողների կարիքները հոգալու համար բյուջեից հատկացվող այլ ֆինանսական վճարների, ինչպես նաև առանձին բուժժառայություններից օգտվելու վճարների փոխհատուցման իրավունք ունեն: Այս և այլ արտոնությունների տրամադրման առավել հանգամանալի պայմանները սահմանվում են կրթության նախարարի առանձին կարգադրությամբ:

Հայրենադարձների մասնագիտական (աշխատանքային) ինտեգրման ոլորտում, կարելի է ասել, օրենքը նախատեսել է պետության նվազագույն մասնակցություն: Աշխատելու համար օտարերկրյա հունգարացիները թույլտվություն են ստանում արտասահմանյան այլ քաղաքացիների հետ ընդհանուր հիմունքներով: Սակայն նրանց համար որոշ բացառություն է արված. այս արտասահմանյան քաղաքացիներին Հունգարիայում աշխատանքի թույլտվություն, յուրաքանչյուր օրացուցային տարում երեք ամիս ժամկետով, տրվում է անկախ աշխատուժի շուկայում տիրող իրավիճակից: Բացի այդ, չնայած օրենքով նախատեսված այս արտոնությունն ավելի երկար ժամկետով չի տրվում, այնուամենայնիվ, նման հնարավորություն սկզբունքորեն թույլատրելի է հատուկ նորմեր ընդունելու պարագայում: Այդպիսով Հունգարիայում ձեռնարկվում են անլեզալ աշխատող հունգարացիների լեզվացման որոշակի միջոցներ: Օրենքի այս դրույթը կարելի է գնահատել միայն անլեզալներին պատժելու միջոցների խստության հաշվառմամբ (նրանք ենթակա են արտաքսման և 5 տարվա ընթացքում իրավունք չունեն մտնել երկիր): Աշխատանքային գործունեության թույլտվություն ստանալու իրավաբանական պայմանների կատարման հետ կապված ծախսերը (մասնավորապես՝ անհրաժեշտ մակարդակի կրթության, մասնագիտական պատրաստության հավաստիացումներ ստանալու և առողջական վիճակով պայմանավորված մասնագիտական պահանջներին համապատասխանելու ծախսերը) նույնպես կարող են փոխհատուցվել ոչ առևտրային ֆոնդերի միջոցով:

Սոցիալական ապահովության և բուժսպասարկման առումներով օրենքի սուբյեկտները բաժանվում են երկու խմբի. անձինք, ովքեր աշխատում են հանրապետության տարածքում և պարտավոր են վճարել բժշկական ապահովագրական, ինչպես նաև կենսաթոշակային ապահովման ֆոնդերին, և օրենքի սուբյեկտներ, ովքեր չեն պարտավորվել անդամավճարներ մուծել այդ նույն ֆոնդերին: Նրանց բուժսպասարկումն ու սոցիալական ապահովությունն իրականացվում են տարբեր կերպ:

Օրենքի օգտավետությունն ու դրա արդյունավետ իրականացման նախադրյալներն ի հայտ եկան տարբեր կազմակերպությունների (հունգարերենով իրականացվող կրթական ծրագրերը ֆինանսավորող ոչառևտրային ֆոնդեր, բուհեր, «հունգարական և համամարդկային հոգևոր ու մշակութային արժեքների» տարածմանը, Հունգարիայի և հունգար ազգի մասին օբյեկտիվ պատկերացումների կազմմանն աջակցող լրատվամիջոցներ և այլ կազմակերպություններ, որոնց գործունեությունն իրականացվում է իրավական կարգավորման տվյալ դաշտում) հետ պետական մարմինների փոխգործակցության կարգավորվածության մեջ:

Հատուկ ուշադրություն է հատկացվել պետության և տարբեր կազմակերպությունների փոխհարաբերություններին, որոնք այս կամ այն չափով գործում են օրենքով կարգավորվող հարթությունում: Առավել հանգամանալի են ԶԼՄ-ին, կրթական հաստատություններին ու կազմակերպություններին, ինչպես նաև ոչառևտրային ֆոնդերին առնչվող դրույթները:

Օրենքն ունի դրույթ այն մասին, որ Հունգարիայի զանգվածային լրատվամիջոցները կանոնավորապես տեղեկատվություն են հավաքում և տարածում արտասահմանում ապրող հունգարացիների մասին, ինչպես նաև Հունգարիայի և հունգար ազգի մասին տեղեկատվությամբ ապահովում են արտասահմանցի հայրենակիցներին: Պետությունն ապահովում է հանրային հեռուստածրագրերի պատրաստումն ու հեռարձակումը արտասահմանում ապրող հունգարական համայնքների համար, այդ նպատակների համար հիմնում է ոչառևտրային ֆոնդեր և աջակցում դրանց գործունեությանը: Սահմանվել է սկզբունք անհրաժեշտ ֆինանսական միջոցները պետությունից հաշվին ապահովելու մասին:

Օրենքում թվարկված երկրներում գործող տարբեր կազմակերպություններ (դրանցում գոյություն ունեցող հունգարական համայնքների շահերից ելնելով) կարող են ակնկալել հունգարական ոչառևտրային ֆոնդերի նյութական օժանդակությունը:

Օրենքի համաձայն արտոնություններ տրամադրող պետական կազմակերպություններն ու հաստատությունները և այն առևտրային կազմակերպությունները, որոնք արտոնյալ ուղևորատոմսեր են տրամադրում, կենտրոնական պետական բյուջեից ֆինանսական միջոցներ են ստանում դրանց հետ կապված ծախսերը փակելու համար:

Նյութական օգնության հայտերի գնահատման և բաշխման համար կառավարությունն ստեղծում է ոչառևտրային բանկեր: Անձանց և կազմակերպություններին նյութական օգնության բաշխումն իրականացվում է մրցութային կարգով, ընդ որում՝ մրցույթը պարտադիր կերպով հայտարարվում է պաշտոնապես: Մրցույթի արդյունքներով տրամադրվող օգնու-

թյունն ստանալու համար հայտերը ներկայացվում են այդ հարցերով իրավասու ոչառևտրային ֆոնդերին:

Դրական լուծման դեպքում հավակնորդը և ոչառևտրային ֆոնդը կնքում են քաղաքացիական պայմանագիր օգնության տրամադրման պայմանների, չափի, նպատակի և դրա օգտագործման հաշվետվության հարցերի վերաբերյալ:

Ոչառևտրային ֆոնդերի ֆինանսական միջոցներն ամեն տարի նախատեսվում են կենտրոնական պետական բյուջեի ծախսերի առանձին հոդվածներով:

Հունգարիայի կառավարության որոշումներով սահմանվում է կենտրոնական պետական իշխանության այն մարմինը, որն օժտվում է օրենքով նախատեսված վկայականները տալու, հետ վերցնելու, գրանցելու և հաշվառելու, ինչպես նաև դրանց տրման, փոխարինման, հետ վերցնելու, գրանցելու, օրենքի սուբյեկտներին արտոնություններ տրամադրելու կարգը որոշելու իրավունքով:

Ոչառևտրային ֆոնդերի ստեղծման ապահովումը, որոնք գործելու են Հունգարիայում և գնահատելու են տվյալ օրենքով նախատեսված օգնության հայտն ու իրականացնելու են դրա բաշխումը, արդեն գոյություն ունեցող ոչառևտրային ֆոնդերի գործողությունների համակարգումը և դրա հետ կապված՝ միջոցների վերաբաշխումը նույնպես դրված են կառավարության վրա:

Օրենքի դրույթների իրականացման երաշխիքներից մեկն է համապատասխան նախարարությունների որոշակիացնող հատուկ ենթաօրենսդրական ակտերի հրատարակումը: Այդ նախարարություններին նույնպես տրված են տարբեր հարցերի օպերատիվ լուծման լիազորություններ՝ օրենքի իրականացման տեսակետից կարևոր հարցերը լուծելիս քաջշուկները բացառելու նպատակով:

Գնահատելով այս փաստաթուղթը՝ անհնար է չնշել նրա հաշվեկշռվածության մասին. պետական վերահսկողության միջոցների հետ կապված «շեղումներ» չկան, ներկայացված իրավունքներին համապատասխանում է դրանց ապահովման միջոցների համակարգը, որոշված են պատասխանատու պետական մարմինները: Օրենքի դրույթները հստակ են, հիմնովին մշակված և արտահայտում են օրենսդրի՝ հիմնախնդիրը կարգավորելու համալիր մոտեցման ձգտումը [5]:

2. Հայրենադարձության ծրագրերի քաղաքական-իրավական, սոցիալ-տնտեսական իրականացման ընդհանուր նպատակները և հիմնախնդիրները

Հայրենադարձության օրենքի իմաստն իրավական կտրվածքով հանգում է նրան, որ այն սահմանում է անձի՝ իր ազգային պետության քաղաքացիությունը ձեռք բերելու պարզեցված կարգը, հայրենադարձների իրավունքներն ու պարտականությունները, հայրենադարձներին օգնելու կարգն ու միջոցները: Հայրենադարձության մասին օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև հումանիտար ոլորտում միջպետական համաձայնագրերի առկայությամբ: Հայրենադարձության մասին օրենքն իրավաքաղաքական տեսակետից անհրաժեշտ է ազգային պետությանը, որի սահմաններից դուրս ապրող նույն ազգությանը պատկանող անձանց թիվն ավելին է, քան հենց ազգային պետությունում ապրողներին: Նման պետության ընդունած որոշումները քաղաքացիության, փախստականների, օտարերկրյա քաղաքացիների իրավական դրության մասին՝ իրենց իրավական կարգավորման դաշտում չեն կարող ընդգրկել հայրենադարձությանն առնչվող հասարակական հարաբերությունների հետ կապված որոշակի հարցեր:

Ակնհայտ է, որ հայրենադարձի կարգավիճակը միջանկյալ է և ժամանակային կտրվածքով պետք է նվազագույն տևողություն ունենա: Անձին հայրենադարձի կարգավիճակ տալու գլխավոր նպատակը ամենամոտ ապագայում նրան այն ազգային պետության լիիրավ քաղաքացու կարգավիճակ շնորհելն է, ուր նա տեղափոխվում է մշտական բնակության: Չնայած իր «կարճատևությանը», այնուամենայնիվ, հայրենադարձի կարգավիճակը (այդ կարգավիճակի փաստաթղթային արտահայտությունն են հայրենադարձության հրավերը և/կամ հայրենադարձի վկայականը, որոնք տրվում են ընդունող երկրի համապատասխան պետական մարմինների, որպես կանոն՝ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների կողմից) անձին օժտում է լրացուցիչ իրավունքներով և նրանց վրա դնում է որոշակի պարտավորություններ, որոնք պետք է ճանաչվեն, ամրագրվեն, երաշխավորվեն և ընթացակարգային ձևակերպում ստանան հայրենադարձության մասին առանձին օրենքում:

Հայրենադարձի և նրա ընտանիքի անդամների իրավունքների վերոնշյալ ճանաչումից, ամրագրումից, երաշխավորումից և ընթացակարգային ձևակերպումից բացի, այլ հարցերը կարող են կարգավորվել այլ իրավական նորմատիվային ակտերով¹, որոնց դրույթները հիմնվում են Հայրենա-

¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ուղղումներին համապատասխան՝ «Բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանվում են 1. մարդկանց իրավունքների իրականացման և պաշտպանության կարգն ու պայմանները, 2. մարդկանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության ձևերը...» (հոդված 83.5):

դարձության մասին օրենքի վրա, համապատասխանում են այդ օրենքին և կոնկրետացնում նրա նորմերը (օրինակ՝ կառավարության որոշումները, գերատեսչական բնույթի ակտերը, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը):

Մեր կարծիքով, կշռադատված իրավաքաղաքական մոտեցում պահանջող հիմնական հարցերը հետևյալն են.

1. Հայրենադարձի՝ քաղաքացիություն ստանալու ժամկետի, հայրենադարձի կարգավիճակը իր ազգային պատկանելության երկրի քաղաքացիությամբ փոխարինելու ժամանակի տևողության հարցը¹: Որպես կանոն, այլ պետությունների այս ոլորտի օրենքները, ինչպես նաև պատրաստվող օրինագծերը (օրինակ՝ Ռուսաստանում) նախատեսում են քաղաքացիության ավտոմատ ստացման սկզբունքը՝ ըստ սահմանն անցնելու և մշտական բնակության վայր հասնելու փաստի, հայրենադարձին ներկայացնելով քաղաքացիության փաստաթղթային ձևակերպման (քաղաքացու անձնագրի ստացման) համար անհրաժեշտ ձևականություններ, կատարելու պահանջներ²:

Նշենք, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1946թ. հոկտեմբերի 19-ի հրամանը, որ վերաբերում էր հայերի Հայկական ԽՍՀ հետպատերազմյան հայրենադարձության հարցին, պարունակում էր դրույթ այն մասին, որի համաձայն՝ «արտասահմանից հայրենիք՝ Խորհրդային Հայաստան վերադարձող, հայ ազգությանը պատկանող անձինք ԽՍՀՄ քաղաքացիներ են ճանաչվում ԽՍՀՄ ժամանելու պահից» [6]:

Հետաքրքիր է նշել նաև պատերազմից հետո Հայկական ԽՍՀ հայերի հայրենադարձության հիմնական բնութագրերի մասին: ՀԽՍՀ կառավարությանն առնթրել ստեղծվեց հայրենադարձված հայերի ընդունման և տեղավորման կոմիտեն, որը սերտ աշխատանքային կապեր էր հաստատել այն արտասահմանյան երկրների խորհրդային ներկայացուցիչների հետ, որտեղից սպասվում էր հայերի վերադարձը: Բացի այդ, Խորհրդային Հայաստանի կառավարությունն այդ երկրներ էր ուղարկել իր ներկայացուցիչներին: Մշակվել էին հայրենադարձների ընդունման միջոցառումներ. վարկերի տրամադրում անհատական բնակարանային շինարարության համար, գույքի տուրքի վերացում հայրենադարձների համար և այլն: Հաշվի առնելով հանրապետության հնարավորությունները պատերազմից հետո՝ որոշում ընդունվեց մեկ տարվա ընթացքում ընդունել մոտ 29 հազար մարդ: Սակայն իրականում 1946թ. Խորհրդային Հայաստանն ընդունեց 50 հազա-

¹ Հայաստանի համար, հաշվի առնելով Սահմանադրության 11.3 հոդվածը, հայ ազգությանը պատկանելու սկզբունքը անհրաժեշտ պայման է պարզեցված կարգով քաղաքացիություն ստանալու համար:

² Ռուսաստանի հայրենադարձության մասին օրինագծով՝ հայրենադարձը, Ռուսաստան ժամանելով, հայրենադարձության հրավերի հիման վրա ձևակերպում է արդեն ձեռք բերված ՌԴ քաղաքացիությունը և ստանում ռուսաստանյան անձնագիր: Այսպիսով, Ռուսաստան ժամանելով՝ հայրենադարձներն սկսում են օգտվել ՌԴ քաղաքացիների բոլոր իրավունքներից:

րից ավելի հայ հայրենադարձների: 1946թ. ընթացքում Սիրիայից, Հունաստանից, Լիբանանից, Իրանից, Բուլղարիայից և Ռումինիայից վերադարձան 50.9 հազար հայեր, 1947թ. Պաղեստինից, Սիրիայից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Հունաստանից, Եգիպտոսից, Իրաքից, Լիբանանից վերադարձան 35.4 հազար հայրենադարձներ: 1948թ. վերադարձան ևս մոտ 10 հազար հայեր: Այսպիսով, 1946-1948թթ. հայրենիք վերադարձան մոտ 100 հազար հայեր տարբեր երկրներից:

2. Իր մշտական բնակության վայրը ընտրելու հայրենադարձի իրավունքի հարցը: Ընդունող պետությունը չպետք է անտարբեր լինի հայրենադարձների մշտական բնակության վայրի հարցի նկատմամբ: Այս հարցը կարող է պայմանավորված լինել ինչպես հայրենադարձի շահերով և գույքային վիճակով (օրինակ՝ ընտանիքների վերամիավորումը, հայրենադարձության երկրում սեփական բնակարան ունենալը), այնպես էլ հայրենադարձին ընդունող և նրան իր քաղաքացիությունը տվող պետության ակնհայտ շահերով: Հայաստանի իրողություններից ելնելով՝ պետք է գտնվի այս երկու բաղադրիչները հաշվի առնող մի ինչ-որ միջին տարբերակ: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ, որպես կանոն, պետությունը խրախուսում է հայրենադարձների բնակությունը իր տարածքի այն մասերում, որոնք հատուկ առանձնացված են նպատակահարմար բնակեցման (պետության տեսակետից) և հետագա զարգացման համար: Եթե հայրենադարձն ի վիճակի չէ ինքնուրույն լուծել իր բնակվելու և տեղավորվելու հարցը, ապա պետությունը հատուկ նախատեսված վայրերում ստեղծում է հայրենադարձների համար բարենպաստ և քաջալերիչ պայմաններ. հողամասերի անվճար հատկացում, արտոնյալ վարկավորում, բնակարանի կառուցման համար դրամական նպաստի հատկացում, հարկային արտոնություններ և այլն: Այն դեպքում, երբ հայրենադարձը իր մշտական բնակության համար ընտրում է այլ շրջան (որը չի մտնում պետության նախատեսած տարածքների ցանկում), ապա պետության աջակցությունը պետք է կրի զգալիորեն պակաս արտոնյալ և ավելի քիչ հովանավորող բնույթ: Ամեն պարագայում, միանգամայն անընդունելի է, որ պետությունը չմասնակցի հայրենադարձի տեղավորման խնդրի լուծմանը: Իրողությունները ցույց են տալիս, որ հիմնականում կհայրենադարձվեն նրանք, ովքեր չունեն բարձր գույքային «ցենզ», ովքեր դժգոհ են Հայաստանի սահմաններից դուրս իրենց ինչպես անձնական (ազգային խտրականություն), այնպես էլ սոցիալ-տնտեսական վիճակից: Այնպես որ, պոտենցիալ հայ հայրենադարձների այս շերտն ի վիճակի չի լինի ինքնուրույն լուծել հայրենիքում տեղավորվելու հարցերը և, համապատասխանաբար, հնարավոր է, որ նրանց տեղափոխման գլխավոր դրդապատճառը կարող է լինել արտոնյալ տեղավորման հենց նախապես տրված և բացատրված ծրագիրը:

3. Աշխատանքի տեղավորման և, ավելի լայն իմաստով, ընդունող երկրի քաղաքացիական հասարակությունում հայրենադարձների ինտեգրման հարցը: Այստեղ կարևոր է նաև լեզվի իմացությունը: Իսրայելի օրինակով կարելի է նշել, որ հայրենադարձների աբսորբցիայի հարցում իսրայելական տնտեսությունը տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչներին ներկայացնում էր տարբեր պահանջներ: Այսպես, բժիշկների մասնագիտական վերապատրաստումն ավելի քիչ արմատական փոփոխություններ է պահանջում, քան հոգեբանների և ուսուցիչների աշխատանքի սկզբունքներն ու մեթոդները: Հասուն նշանակություն ուներ երբայերենի իմացությունը, չնայած, հասկանալի է, գիտնականը կամ բժիշկը կարող էին թույլ տալ իրենց ավելի վատ իմանալ երբայերենը, քան նրանք, ում համար լեզվի իմացությունը նրանց մասնագիտական գործունեության հիմքն է (օրինակ՝ լրագրողները և գրողները): Շատ դեպքերում հայրենադարձներից պահանջվում էր բավական լուրջ վերաորակավորում անցնել Իսրայելում իրենց մասնագիտությամբ աշխատելու իրավունք ստանալու համար: Դա, մասնավորապես, վերաբերում էր իրավաբաններին և բժիշկներին: Եվ, վերջապես, հայրենադարձների մեջ կային այնպիսիները, ովքեր աշխատել էին այնպիսի բնագավառներում, որոնք Իսրայելի տնտեսությունում պարզապես չեն եղել [1]:

Լեհաստանի հայրենադարձության մասին օրենքի մի առանձին բաժին կարգավորում է «Հայրենադարձների մասնագիտական ակտիվացման» հետ կապված հարցերը: Այդ բաժնում նախատեսված է, որ պետությունը ծածկելու է գործատուների՝ հայրենադարձներին աշխատանքով ապահովելու հետ կապված ծախսերի մի մասը, բացի այդ, նախատեսված է այլ երկրների նույնանման օրենքներում ամրագրված ընդհանուր կանոն. «Եթե հայրենադարձը որակավորում չունի կամ այնպիսի որակավորում ունի, որի առաջարկը տեղի աշխատանքի շուկայում չկա, ապա գործատուն կարող է կազմակերպել նրա վերապատրաստումը՝ նրա որակավորումը բարձրացնելու կամ փոխելու նպատակով: Գործատուին փոխհատուցվում են ուսման համար կատարած ծախսերը...» (հոդված 26):

3. Հայրենակիցների հայրենադարձության միջազգային փորձը

Արտասահմանյան երկրների փորձը երևան է բերում հայրենադարձության գործընթացի դրական և բացասական հետևանքները, որոնց գոյությունը պայմանավորված է յուրաքանչյուր կոնկրետ պետության առանձնահատկությամբ: Մասնագետները միանգամայն դրական են համարում Գերմանիայի օրինակը. գերմանացիների հայրենադարձությունը 1945թ. հետո երկրի հետագա բարգավաճման մեջ կարևոր դեր է ունեցել: Այսպես, 12 տարվա ընթացքում, 1945-1957թթ., ԳՖՀ բնակչությունը հայրենադարձների հոսքի

շնորհիվ ավելացել էր մեկ երրորդով, ընդ որում՝ հայրենադարձների ընդհանուր թվի 3/5-ը վերադարձել է 1946թ.: Հարկ է նշել, որ հետպատերազմյան տարիներին Գերմանիայի և՛ «տեղացի», և՛ նորեկ բնակիչները մոտավորապես հավասար տնտեսական վիճակում էին [7]:

Գերմանիայի փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս երկիրը մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտն ուներ արդեն էթնիկ գերմանացիների հայրենադարձման լավ մտածված դոկտրին և հետևողական ծրագրեր: Երկրորդ համաշխարհայինի սկսվելու պահին Գերմանիան Ռեյխի սահմաններից դուրս ապրող գերմանացիների (այսպես կոչված «ֆոլկսդոյչենների») նկատմամբ իրականացնում էր վերաբնակեցման հսկայածավալ ծրագրեր: Չնայած գերմանացիների հայրենադարձման-վերաբնակեցման քաղաքականության դրույթները, որոնց մասին կխոսենք ստորև, կազմում էին հիտլերյան Գերմանիայի պետական գործունեության մասը և իրականացվում էին դրանից բխող առանձնահատուկ միջոցներով, մեթոդներով ու դոկտրինալ դրույթներով, այնուամենայնիվ, մեր կարծիքով, օգտակար կլինեք, ճանաչողական (և ոչ միայն) նպատակներ հետապնդելով՝ անդրադառնալ այդ շրջանում գերմանացիների հայրենադարձման-վերաբնակեցման հիմնական դրույթներին:

1939թ. սեպտեմբերի 6-ին (այսինքն՝ վերմախտի կողմից Արևմտյան Լեհաստանը զավթելուց անմիջապես հետո) Ռեյխստագում Հիտլերի ելույթի գլխավոր ասելիքն այն էր, որ «եվրոպական ժողովուրդների միջև պետք է լինեն հստակ ու պարզորոշ սահմաններ, հանուն որի Գերմանիան նոր բնակատեղիներում վերաբնակեցնի հարյուր հազարավոր «ֆոլկսդոյչենների»: Հաջորդ օրը ստեղծվեց ազգությամբ գերմանացիների հարցերով հատուկ ռեյխսկոմիսարիատ Հիմլերի գլխավորությամբ, որի խնդիրների մեջ մտնում էին. 1. Ռեյխի սահմաններից դուրս ապրող բոլոր «ֆոլկսդոյչենների» անհապաղ հայրենադարձության իրականացումը, 2. «ազգությամբ գերմանացիների» համար վտանգավոր ամեն տեսակ վնասակար ազդեցությունների բացառումն ու կասեցումը, 3. գերմանացիներով բնակեցված նոր տարածքների ստեղծումը՝ դրանցում նախնառաջ Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայից հայրենադարձված գերմանացիների վերաբնակեցման միջոցով: Այսպես սկսվեց «*Heim ins Reich!*» («Դեպի տուն՝ Կայսրություն») կարգախոսով կամպանիան: 1939թ. հոկտեմբերի 11-13-ին ստեղծվեց ներգաղթի Կենտրոնական բյուրոն՝ *Einwanderungszentralstelle (EWZ)*: Նրա իրավասությունների մեջ, առաջին հերթին, մտնում էին «ֆոլկսդոյչենների» ներգաղթի և հպատակության հարցերը¹: Առաջնահերթ ուշադրություն էր դարձվում

¹ Կարգը մոտավորապես նույնն էր գերմանացի հայրենադարձների բոլոր խմբերի համար. նրանց գրանցում էին ընտանիքներով և անհատապես, լուսանկարում էին, հարցաթերթիկ լրացնում նրանց առողջության, ռասայի, քաղաքական հայացքների վերաբերյալ: Նրանք, ովքեր անցնում էին ռասայական ստուգումը, գերմանական քաղաքացիության իրավունք էին ստանում:

խորհրդային ազդեցության գոտում (որն այդպես էր ներկայանում Մոլոտով-Ռիբենտրոպ պակտի ստորագրումից հետո) ապրող գերմանացիներին: 1939թ. սեպտեմբերի 28-ի գաղտնի արձանագրությունում նախատեսված էր կես խորհրդային ազդեցության գոտում բնակվող գերմանացիներին փոխադարձ աջակցության մասին, եթե նրանք ցանկանում են տեղափոխվել գերմանական ազդեցության գոտի (նույնը գործում էր նաև բելառուսների և ուկրաինացիների համար, ովքեր նպատակ ունեին բնակություն հաստատել ԽՍՀՄ-ում): *EWZ* առաջին տարածաշրջանային մարմինը բացվեց 1939թ. հոկտեմբերի 12-ին Գոթենհաֆենում (այժմ Գդին)՝ Բալթիկ ծովի ափին և կոչվում էր «Ներգաղթի հյուսիսարևելյան բյուրո» (*Einwanderungsstelle Nordost*): Արդեն 1939թ. հոկտեմբերին ստեղծվեց եվակուացիայի գերմանա-խորհրդային խառը հանձնաժողովը, իսկ նոյեմբերի 16-ին ստորագրվեց համապատասխան համաձայնագիրը:

Գերմանիա հայրենադարձության մասին խորհրդա-գերմանական պայմանագրերի համաձայն՝ ԽՍՀՄ կողմից 1939-40թթ. անեքսիայի ենթարկված տարածքներում ապրող գերմանացիներն իրավունք ունեին «հայրենադարձվել» ԽՍՀՄ-ից: Այդ հայրենադարձությունը խիստ էթնիկական բնույթ էր կրում. ո՛չ սլավոնները, ո՛չ հրեաները, եթե նույնիսկ «արիական» ընտանիքների անդամներ էին, այս իրավունքից չէին օգտվում: Արիացիներին համառորեն խորհուրդ էին տալիս բաժանվել այնքան «անցանկալի» ամուսիններից:

Ներկայացվում էր այնպես, թե իբր վերաբնակեցումը կամավոր է, սակայն, ըստ էության, այդպես չէր. միանգամայն ակնհայտ էր, որ նրանց, ովքեր մնում են, խորհրդային կողմը կհամարի որպես գերմանական գործակալներ և «կասկածելի տարրեր»: Սա հասկանում էին և «ֆուկսդոյչեները», դրա համար էլ գերմանական քարոզչությունը ստիպված չէր չափից ավելի ջանալ այդ «կամավոր-պարտադիր» տեղաշարժն իբրև միանգամայն ազատ միգրացիա ներկայացնելու համար: Այդ բոլոր տեղափոխությունները կոչվում էին «պայմանագրային վերաբնակեցումներ», քանի որ «ֆուկսդոյչեների» յուրաքանչյուր խմբի վերաբերյալ Գերմանիան ջանում էր կնքել միջազգային պայմանագրեր: Առաջին նմանատիպ պայմանագիրը Գերմանիան կնքեց Էստոնիայի (1939թ. հոկտեմբերի 15), հետո՝ Իտալիայի (հոկտեմբերի 12-ին՝ Հարավային Տիրոլի Ալտո-Ադիջի գերմանացիների վերաբերյալ, այնուհետև՝ Լատվիայի (հոկտեմբերի 30), երկու անգամ՝ ԽՍՀՄ-ի (նոյեմբերի 16-ին՝ Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելառուսի գերմանացիների, իսկ 1940թ. սեպտեմբերի 5-ին՝ Բեսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի գերմանացիների վերաբերյալ) հետ: Հաջորդ պայմանագիրը կնքվեց Ռումինիայի (1940թ. հոկտեմբերի 22), այնուհետև՝ նորից ԽՍՀՄ-ի (երկու պայմանագիր 1941թ.

հունվարի 10-ին. մեկը Էստոնիայի և Լատվիայի գերմանացիների, մյուսը՝ Մեմելի և Սուվալի մարզերից Լիտվա լիտվացիների, ռուսների և բելառուսների վերաբնակեցման վերաբերյալ), ևս մեկ անգամ Բտալիայի (օգոստոսի 31-ին՝ Լայբախից «ֆոլկսդոյչենների» վերաբնակեցման մասին) և, վերջապես, Խորվաթիայի (1942թ. սեպտեմբերի 30) հետ: «Պայմանագրային վերաբնակների» ընդհանուր թիվը կազմեց 751 460 մարդ:

Մինչև այն պահը, երբ կարմիր բանակն ազատագրեց Լոձը և *EWZ*-ն, բնականաբար, դադարեց գոյություն ունենալ, նրա քարտադարանում գրանցված էին 1.055.400 էթնիկ գերմանացիներ: Պատերազմի ավարտին և դրանից հետո գերմանացի բնակչությունը ստիպված էր հաղթահարել իր պատմության մեջ ամենածավալուն և բռնի տեղափոխությունները: Բայց հիտլերյան Գերմանիայի՝ վերը նկարագրված հավակնոտ ծրագրերի հետ դրանք ընդհանուր ոչինչ չունեին: Ավելին, դրանք այդ «ծրագրերի» ուղիղ հակապատկերն էին: Հիտլերի հրահրած գերմանացիների վերաբնակեցման «արևելյան ուղղությունը» կտրուկ փոխեց ուղղվածությունը դեպի հակադիր՝ արևմտյան կողմը:

Նշված ժամանակաշրջանում գերմանացիների տեղաշարժի երեք փուլեր են առանձնացվում: Առաջինը (1944թ. վերջ – 1945թ. գարուն) գերմանական իշխանությունների նախաձեռնած *էվակուացիան* է, երկրորդը (1945թ. մարտ-ապրիլից մինչև հուլիս), այսպես կոչված, «*վայրի*» արտաքսումն էր և երրորդը (Պոտսդամի պայմանագրի ստորագրումից և դրան հետևած համաձայնագրերից հետո) այն փուլն էր, երբ «արտաքսումն» օրինականացվեց և ձեռք բերեց համեմատաբար քաղաքակիրթ ձևեր:

Գերմանացիների վերաբնակեցման «քաղաքակիրթ փուլի» համար Համատեղ վերահսկիչ հանձնաժողովի ռազմագերիների և տեղափոխված քաղաքացիների տնօրինությունը մշակել էր ծրագիր, իսկ 1945թ. մայիսի 22-ին Պոտսդամում կնքվեց համաձայնագիր, ըստ որի՝ Լեհաստանի գերմանացիները բաշխվում են խորհրդային (2 մլն մարդ) և անգլիական (1,5 մլն), իսկ Չեխոսլովակիայի գերմանացիները՝ ամերիկյան (1,75 մլն) և խորհրդային (0,75 մլն) գոտիների միջև: Բացի այդ, նախատեսված էր Հունգարիայի 500 հազար գերմանացիների տեղավորել ամերիկյան գոտում, ավստրիական ծագման գերմանացիները (150 հազար մարդ) պետք է բնակեցվեին ֆրանսիական օկուպացման գոտում: Ծրագրվում էր այս վերաբնակեցումն իրականացնել 1945թ. դեկտեմբեր - 1946թ. օգոստոս ընթացքում [8]:

Ֆրանսիան հայրենադարձության ծրագրերի իրականացման իր առանձնահատկություններն ուներ: «Մեծ ելքի» ժամանակ նախկին գաղութներից հայրենիք վերադարձող հայրենադարձները հանդիպեցին լավ հարմարված հայրենակիցներին, որոնց համար նրանք անցանկալի սոցիալա-

կան մրցակիցներ էին: Պետությունը համակողմանի օգնություն էր ցուցաբերում Հյուսիսային Աֆրիկայից տեղափոխվածներին (այսպես կոչված «սևառտներին»), բայցևայնպես չկարողացավ նրանց լիովին հարմարեցնել թվում է թե հարազատ էթնիկական միջավայրին: Արդյունքում՝ նույնիսկ «սևառտների» սերունդները, մեծ մասամբ, հետևում են «բնիկ» ֆրանսիացիներին ոչ բնորոշ ուլտրաաջ քաղաքական հայացքներին, աջակցում Ժ.-Մ. լը Պենի Ազգային ճակատին [9]:

Այն ժամանակ անցկացված սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տվել, որ ֆրանսիացիների 62%-ը զգուշավոր մոտեցում ունեն նորեկների հանդեպ: Ֆրանսիան աշխատուժի կարիք ուներ, իսկ նորեկները հիմնականում ծառայողներ էին: Նրանցից ոչ բոլորը կարողացան ընկալել երկրի մշակույթը, ումանք վատ գիտեին ֆրանսերենը: Հաճախ դիմավորող կողմը այնքան էլ հյուրասեր չէ հենց այն պատճառով, որ միշտ տարբերություններ գոյություն ունեն միևնույն մշակույթի լոկալ տարբերակների միջև [10]:

Հայրենադարձներին բնակարանով ապահովելու հատուկ ծրագիրն ավարտվեց 1965թ. վերջին, որից հետո հայրենադարձները հավասարեցվեցին բնիկ ֆրանսիացիներին բնակարան ստանալու կամ կառուցելու հարցերում [7]:

Հետաքրքիր են նաև որոշ երկրների մոտեցումները, որոնք մինչև օրս չեն ընդունել հայրենադարձության մասին օրենք, բայց ստեղծված հանգամանքների բերումով որոշակի առնչություն ունեն Հայաստանի Հանրապետության հայերի հայրենադարձության հնարավոր ծրագրին: Ներկայումս Ռուսաստանում աշխատում են «Հայրենադարձության մասին» օրինագծի վրա: 2004թ. վերջին Պետդումայի «Родина» պատգամավորական խմբակցության ներկայացրած «Հայրենադարձության մասին» օրինագիծը քաղաքական բնույթի «սուր անկյուններ» է պարունակում: Չնայած օրինագծի հեղինակները (պատգամավորներ Ա.Սավելևը և Ա.Չուևը) արդարացի էին համարում ԽՍՀՄ նախկին բոլոր քաղաքացիներին հայրենադարձության իրավունք տալը, բայց «քաղաքական դժվարությունների և Ռուսաստանի բյուջեի ոչ մեծ նյութական հնարավորությունների պատճառով ռուսներով և Ռուսաստանի այլ «բուն» ժողովուրդներով սահմանափակում են այն անձանց շրջանակը, ում տրվում է հայրենադարձության իրավունք»: «Բուն» ժողովուրդների մեջ ներառվում են «ռուսները, այդ թվում՝ բուն ռուսները (վելիկոռուսները), ուկրաինացիները (մալոռուսները), բելառուսները, աբազիները, ավարները... յակուտները» [11]:

Այսպիսով, «բուն» ժողովուրդների ցանկ են մտել ներկայիս Ռուսաստանի այն ազգերն ու ազգությունները, որոնք այս կամ այն չափով պետաիրավական «ինքնորոշման» տարրեր ունեն Ռուսաստանի Դաշնության

կազմում: «Բուն» լինելու շրջանակից դուրս են մնացել Ռուսաստանի տարածքում բնակվող որոշ խոշոր և պատմականորեն ներկայացված ազգեր, որոնցից են, մասնավորապես, հայերը: Ամենայն հավանականությամբ, օրինագծի հեղինակները դոգմա են դարձրել «ինքնորոշման» սկզբունքը, ուստի հայերը «բուն ժողովուրդ» կարող են լինել միայն իրենց հայրենիքում՝ Հայաստանի Հանրապետությունում: Ի պատիվ որոշ ռուս մասնագետների, օրինագծի ձևակերպումները ենթարկվել են համապատասխան քննադատության: Այսպես, Պետդումայի ԱՊՀ գործերով և հայրենակիցների հետ կապերի կոմիտեի «կլոր սեղանի» ժամանակ (2004թ. նոյեմբերի 23) Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության հումանիտար համագործակցության և մարդու իրավունքների հարցերով վարչության փոխտնօրեն Ս.Նիկոլայևը նշել է, որ «Ռուսաստան ռուսների և այլ բուն ժողովուրդների ներկայացուցիչների հայրենադարձության մասին դաշնային օրինագիծը թույլ չի տալիս լուծել այդ խնդիրը՝ հայտարարության կարգով առաջարկելով թե՛ քաղաքական և թե՛ իրավաբանական առումներով միանգամայն կասկածելի մեխանիզմներ: Ինչ վերաբերում է Ռուսաստանի ժողովուրդների համար կիրառվող «բուն» տերմինին, ապա այն մինչև օրս գիտական և հասարակական-քաղաքական բանավեճերի առարկա է (բացի «բուն փոքրաթիվ ժողովուրդներ» բառակապակցության մեջ կիրառությունից): Հոգված 1-ում ռուս, ուկրաինացի և բելառուս ժողովուրդների միասնության միակողմանի հռչակումը և նշված ժողովուրդների բոլոր ներկայացուցիչներին մեխանիզմներն քաղաքացիություն շնորհելը խիստ բացասաբար կրնդունվեն անկախ պետություններ հանդիսացող Ուկրաինայի և Բելառուսի իշխանությունների ու հասարակության ազգայնականորեն տրամադրված հատվածի կողմից» [12]:

Հարկ է նշել, որ ռուսաստանյան քաղաքական գործիչները, ովքեր անմիջական կապ ունեն ՌԴ-ում հայրենադարձության հնարավոր հիմունքների մշակման հետ, այս կամ այն չափով հանդես են գալիս «Родина»-ի՝ «բնիկության» սկզբունքի ընկալմանը մոտ դիրքորոշումներով. «... ծագում են բազմաթիվ հարցեր: Օրինակ, կարո՞ղ են, արդյոք, հայրենակիցներ համարվել հրեաները և հայերը, ում նախնիները դարեր շարունակ ապրել են Ռուսաստանում, բայց չէ՞ որ Ռուսաստանից բացի գոյություն ունեն և՛ Իսրայելը, և՛ Հայաստանը: Հայրենադարձության մասին օրենք կա Իսրայելում, Գերմանիայում, Լեհաստանում, Ղազախստանում և նույնիսկ մեզ մոտ՝ Ադիգեյում: Այնտեղ խոսքը, որպես կանոն, ներքին օրենսդրությամբ ճանաչված, պետականակերտ, «տիտղոսակիր» ազգի ներկայացուցիչների մասին է: Մենք պատրաստ չենք այդպիսի ճանաչման մեր պատմական բազմազգության պատճառով: Կարելի է, իմ կարծիքով, հայրենադարձվելու իրավունք

ունեցող հայրենակիցներ համարել Ռուսական կայսրության, Խորհրդային Միության այն եկվորներին և նրանց սերունդներին, ովքեր պատկանում են այն ժողովուրդներին, որոնք Ռուսաստանից բացի ուրիշ որևէ տեղ չեն գտել իրենց ազգային-պետական ինքնորոշումը: Այսինքն՝ ռուսներին, թաթարներին, բաշկիրներին, ադիգեյներին, յակուտներին և այլն» [13]:

Հետևություններ

Հայրենադարձության երևույթին բախվող բոլոր երկրները կանգնել են վերադարձող հայրենակիցների ընդունման և տեղավորման անհետաձգելի միջոցներ ձեռնարկելու հիմնախնդրի առջև, ինչը պահանջել է օրենսդրության փոփոխություն, հատուկ պետական մարմինների (հայրենադարձների գործերով քարտուղարություններ, նախարարություններ) ստեղծում և այլն: Շատ երկրներում հայրենադարձությունն ուղեկցվում էր ներքին իրավիճակի որոշակի ապակայունացմամբ, ընդ որում՝ իշխանություններին գանգատներ ներկայացնում էին ինչպես բուն բնակիչները, ովքեր դժգոհ էին սոցիալական մրցակիցների հոսքից, այնպես էլ հայրենադարձները, ովքեր մեղադրում էին իշխանական կառույցներին բավականաչափ օպերատիվ ձևով իրենց խնդիրներին չարձագանքելու մեջ: Բացի անհետաձգելի միջոցառումներից, պետությունները հարկադրված էին շտապ կարգով մշակել և իրագործել հայրենադարձների օգնության ռազմավարություն, որը ներառում էր էժան բնակարանների շինարարություն, դատարկ բնակարանների բռնագրավում և այլն: Բոլոր երկրների համար ընդհանուր էր այն, որ փորձ էր արվում սերտաճման շատ խնդիրներ դնել հենց հայրենադարձների վրա, ինչն էլ, վերջին հաշվով, առաջ էր բերում վերջիններիս դժգոհությունը:

Հայաստանի պայմաններում, որին բնորոշ են զբաղվածության փոքր շուկան, գործազրկության բարձր տոկոսը, հայրենադարձներին աշխատանքով ապահովելը կարող է լրջագույն խնդիր դառնալ: Ամենայն հավանականությամբ, ելքը հնարավոր է աշխատանքի տեղավորման և ընդունող երկրի համար նպատակահարմար տեղերում հայրենադարձներին բնակեցնելու հարցերի համատեղմամբ: Այս պարագայում հնարավոր է, որ հայրենադարձների մի որոշակի շերտ ներգրավվի գյուղատնտեսական աշխատանքներում, և նրանք կունենան իրենց դերը երկրի անբնակ տեղանքների յուրացման գործում:

Մեզ թվում է՝ հայ սփյուռքի՝ որպես հայրենադարձների հնարավոր զգալի հոսքի աղբյուրի, պարագայում կգործի, այսպես կոչված, «գույքային մկրատի» ցուցանիշը: Այն ենթադրում է խիստ հակադրություն պոտենցիալ հայրենադարձների երկու շերտերի միջև. կամ բարձր գույքային ցենզ, որն ինքնուրույն տեղավորվելու հնարավորություն է տալիս («հայրենադարձու-

թյուն հոգևոր նկատառումներից ելնելով»), կամ բավական ցածր գույքային ցենզ, երբ զգացվում է պետության օգնության կարիքը («հայրենադարձություն նյութական նկատառումներից ելնելով»): Հնարավոր հայրենադարձների միջին շերտը, ըստ երևույթին, զգալի չի լինի, քանի որ այդ շերտին պատկանող մարդիկ հարմարվել են կյանքին Հայաստանի սահմաններից դուրս և իրենց եկամուտներով ապահովում են Հայաստանում ապրող իրենց հարազատներին ու մոտ (և նույնիսկ միջնաժամկետ) հեռանկարում հայրենիք վերադառնալու որևէ ծրագիր չունեն:

Փետրվար, 2006թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Израиль. Государство Израиль. Абсорбция. <http://www.eleven.co.il/article/11731>.
2. Международные акты о правах человека: Сборник документов, М., 2002.
3. Конституции государств Европы.- Т.1. М., 2001, с.539.
4. Коваль А., Венгерская диаспора – основа украинско-венгерского сотрудничества. <http://sdpuo.org.ua/news/ukraine/podr15004>.
5. Андреева Г., Венгерский закон о зарубежных соотечественниках <http://www.materik.ru/>.
6. Большая Советская Энциклопедия, т. 22, М., 1975, с.35.
7. Полоскова Т., Опыт зарубежных стран по взаимодействию с диаспорами. <http://www.russiane.org/documents/analitics/62.html>.
8. Полян П., Принудительные миграции до Гитлера и Сталина: исторический экскурс. http://www.memo.ru/history/deport/polyan0.htm#_VPID_8.
9. Витковская Г., С.Панарина (отв. ред.), Миграция и безопасность в России. <http://www.carnegie.ru/ru/pubs/books/volume/56595.htm>.
10. Филиппова Е., Роль культурных различий в процессе адаптации русских переселенцев в России // Идентичность и конфликт в постсоветских государствах: Сб. статей / под ред. М.Олкотт, В.Тишкова, А.Малашенко / М., 1997, с.359.
11. Докучаева А., Закон «О репатриации в Российскую Федерацию» обсудили на «круглом столе». <http://www.russkie.lv/>.
12. Стенограмма «круглого стола» в Комитете Государственной Думы по делам СНГ и связям с соотечественниками. <http://www.rodnoveriye.com/actual/repatriation.html>.
13. Затулин К., России нужен закон о репатриации, Литературная газета, 31 марта 2004г.

РЕПАТРИАЦИЯ СООТЕЧЕСТВЕННИКОВ: ВОПРОСЫ ПРАВОВОГО ОБЕСПЕЧЕНИЯ И ЭФФЕКТИВНОЙ РЕАЛИЗАЦИИ

Михаил Агаджанян

Резюме

Осуществленный в статье общий анализ возможных путей решения политико-правовых вопросов в процессе правового обеспечения и непосредственной реализации программы по репатриации выявил главную и определяющую роль национального государства – инициатора и гаранта репатриации соотечественников. Международный опыт свидетельствует о необходимости предоставления национальным государством лицам идентичного национального происхождения обеспеченной правовым установлением возможности по добровольной репатриации на свою историческую Родину с последующим получением статуса гражданина и восприятием роли полноправного субъекта в деле развития и процветания принимающей страны. Правовое регулирование сферы репатриации, признание и обеспечение, система и механизмы реализации права репатрианта и членов его семьи на возвращение являются существенным элементом демократичности национального государства, показателем его стремления к построению правового общества и важным критерием развития страны.

Всё указанное имеет непосредственное отношение к сегодняшним реалиям Республики Армения. Продуманная правовая составляющая, создание организационно-институциональных предпосылок и поиск финансовых ресурсов для эффективной реализации репатриационной программы – наглядный показатель международно-гуманитарной социализации Республики Армения, становления и развития её экономики, стремления армянской нации к консолидации в момент общей международной нестабильности. Нынешние вложения в проектирование и осуществление программ по репатриации наших соотечественников в самой ближайшей перспективе станут важным элементом в нивелировании угроз и вызовов Республике Армения демографического, социально-экономического и иного характера.

С точки зрения автора, принятие Закона Республики Армения «О ре-

патриации» назрело, и сам Закон должен урегулировать вопросы принципов и целей, ответственности государства в сфере репатриации соотечественников, предусмотреть порядок и условия предоставления статуса репатрианта, его права и обязанности, льготы для адаптации и интеграции репатриантов и членов их семей в общество страны, обозначить основы полномочий государственных органов, задействованных в процессе реализации программы репатриации соотечественников.